Կին և քաղաքականությունը

Ü á Û » Ù µ » ñ 2014

² Ý í × ³ ñ Ñ ³ í » É í ³ Í

www.WomenNet.am

Յուրաքանչյուր կին, Յուրաքանչյուր իրավունք, Յուրաքանչյուր որպե

էջ 4

Լուսանկարում՝ Նվարդ Վարյան, Գոհար Արասխանյան, Վարդուհի Սիմոնյան, Տաթևիկ Մարգարյան

ÆÙ ÁÝ ï ñáõÃÛáõÝÁ

Ոստիկանության ակադեմիայի աղջիկները

Վերջին տարիներին ՀՀ ոստիկանության ակադեմիայում հետաքրքիր միտում է նկատվում՝ աղջիկ կուրսանտների թիվը տարեցտարի աճում է: Եթե 2011-ին ակադեմիա է ընդունվել ընդամենը 6 աղջիկ, ապա այս տարի այդ թիվը գերազանցում է տղաների թիվը՝ 21:16-ի հարաբերակցությամբ: Գուցե աղջիկների ներգրավումը ոստիկանության հայտնի «հրեշտակների գումարտակում» կոտրեց կարծրատիպերը...

Ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ գնդապետ Տիգրան Եսայանը մեզ հետ զրույցում նշեց, որ աղջիկները միշտ էլ հետաքրքրված են եղել ոստիկանի մասնագիտությամբ, սակայն նախկինում կուրսում միայն 10 տոկոսն են աղջիկներ եղել:

Աղջիկ կուրսանտների հետ մեր զրույցներից պարզվեց՝ շատերը փոքրուց են երազել ոստիկան դառնալ:

«Դեռ 4-րդ դասարանի աշակերտուհի էի, երբ որոշեցի ոստիկան դառնալ: Ինձ հետ մի դեպք պատահեց, երբ քիչ էր մնում մեքենայի տակ ընկնեի: Բարեբախտաբար, փրկվեցի և այդ օրը որոշեցի, որ պետք է ճանապարհային ոստիկան դառնամ, որ նպաստեմ ավտովթարների նվազեցմանը»,- ասում է 22-ամյա Վարդուհի Սիմոնյանը, ով ակադեմիայի 4-րդ կուրսում է սովորում: Նախքան այստեղ ընդունվելը դեղագործի մասնագիտություն է ստացել. «Առաջին կրթությունս ստացել եմ այն պայմանով, որ հետագայում պիտի ընդունվեմ ոստիկանության ակադեմիա, ընտանիքիս անդամները դեմ չեղան»:

«Լսել եմ դեպքեր, երբ աղջիկներն ասում են, որ հայրերն են դեմ եղել, անգամ եղբայրները, բայց մեզ մոտ նման բան չի եղել»,- ասում է Գոհար Արասխանյանը՝ ակադեմիայի մեկ այլ կուրսանտը: Նրա խոսքով՝ ինքը միշտ ինքնուրույն է որոշումներ կայացրել, և ոստիկան դառնալու որոշումը ևս իրենն է: Բոլոր աղջիկները նշում էին, որ ընտանիքի անդամները միայն խրախուսել են իրենց՝ մասնագիտության ընտրության հարցում:

«Ես մեկ անգամ փորձեցի ընդունվել, չստացվեց, մեկ տարի էլ պարապեցի և ընդունվեցի: Հայրս միշտ ոգևորել է ինձ»,- պատմում է 22-ամյա Տաթևիկ Մարգարյանը: Նա Սևանից է, ոստիկանության ակադեմիա ընդունվել է եղբոր հետ, սակայն նշում է, որ իր որոշումը պայմանավորված չի եղել եղբոր՝ մասնագիտության ընտրությամբ:

Իսկ 19-ամյա Նվարդ Վարյանի համար ոգեշնչման աղբյուր է եղել հարազատ հայրը, ով երկար տարիներ ծառայել է ոստիկանությունում: «Ես շատ կուզեի աշխատել հանուն ոստիկանություն-հասարակություն կապի սերտացման, շատ եմ ուզում, որ լուսաբանվի ոչ միայն այն, ինչն արատավորում է ոստիկանի անունը, այլ նաև այն նվիրյալ անձանց արարքները, ովքեր ջանք չեն խնայում հասարակությանը ծառայելու համար»,- ասում է Նվարդը:

Աղջիկները նշում են, որ իրենց համար բարդ չի եղել հաղթահարել ֆիզիկական պատրաստվածության նորմատիվները, իսկ սեռային անհամաչափ բաշխված կուրսում սովորելը սկզբում դժվար է եղել. «Տղաները մեզանից մոտ տասը անգամ շատ էին, սկզբում մի քիչ դժվար էր, բայց մեր տղաներն իրենց վարքով երբեք թույլ չեն տվել, որ նեղվենք, մշտապես հարգանքով են վերաբերվել»,- ասում է Վարդուհին:

Ոստիկանության կրթահամալիրի պետի կադրերի և անձնակազմի գծով տեղակալ Գարեգին Մալխասյանն էլ նշում է, որ ուսումն ավարտելուց հետո, անկախ սեռից, ակադեմիայի բոլոր շրջանավարտներն ապահովվում են աշխատանքով ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում, նրանց բաշխումն են ըստ ցանկության, մասնագիտացման և բնակության վայրի:

«Աղջիկների պահանջարկ կա հատկապես անչափահասների գործերով տեսուչի պաշտոնում, սակայն չի բացառվում յուրաքանչյուր ծառայությունում նրանց նշանակումը»,- ասում է գնդապետ Եսայանը:

Գոհարն ու Տաթևը ցանկանում են քննիչ աշխատել, Վարդուհին՝ ճանապարհային ոստիկան, իսկ Նվարդը դեռ վերջնականապես ձևավորված նախընտրություն չունի: Սակայն նրանք բոլորն էլ վստահաբար պնդում են, որ անկախ ամեն ինչից շարունակելու են աշխատել այս համակարգում: «Չեմ կարծում, թե երբևէ կթողնեմ աշխատանքս, քանի որ ոստիկան դառնալն ինձ համար եղել է կյանքի նպատակ, ամուսնանալը, երեխաներ ունենալը չպետք է խանգարեն աշխատանքին»,- ասում է Վարդուհին:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ռազմաքաղաքացիական ծրագրերի ազգային պատասխանատու Սուսաննա Նալբակյանի խոսքով՝ 2006-ից գրասենյակը սերտ համագործակցում է Հայաստանի ոստիկանության հետ՝ ծառայության մեջ ժողովրդավարական գործելակերպը ներդնելու նպատակով: «Թեև գրասենյակը կին ոստիկանների նկատմամբ հասարակական կարծիքի հատուկ ուսումնասիրություն չի անցկացրել, սակայն բոլոր միջոցառումների ժամանակ միշտ բարձրաձայնվել է ավելի մեծ թվով կին ոստիկաններ տեսնելու հասարակության ցանկությունը: Դա հատկապես վերաբերում է համայնքային ոստիկանությանը, քանի որ հենց նրանք են անմիջականորեն շփվում բնակիչների հետ, մտնում ընտանիքներ, և կնոջ նրբանկատությունն այստեղ առավել քան կարևոր է»,- ասում է նա:

ä »ÏÇÝ+20. Î ³ Ý ³ Ûù »õ ³ Ýí ï ³ Ý · áõÃÛáõÝÁ

Ասում են՝ այսօր զինված հակամարտությունների ընթացքում ավելի վտանգավոր է կին, քան զինվոր լինելը: Ոչ իր սեփական մեղքով կանայք հայտնվում են բազմաթիվ հակամարտությունների առաջնագծում՝ անհամաչափորեն տուժելով դրանց հետևանքներից: Քաղաքացիական բնակչության շրջանում զոհերի, գլխավորապես, կանանց և երեխաների թիվը հաճախ գերազանցում է զոհված և վիրավորված զինծառայողների թիվը:

Ինչ է առաջարկվում՝

- Կանանց մասնակցության ընդլայնում հակամարտությունների լուծմանը վերաբերող որոշումների կայացման մակարդակում.
- Ռազմական ծախսերի կրճատում և սպառազինությունների առկայության վերահսկում.
- Հակամարտությունների խաղաղ լուծման քարոզում և կոնֆլիկտային իրավիճակներում մարդու իրավունքների խախտման դեպքերի թվի կրճատում.
- Խաղաղասիրության և խաղաղության մշակույթի քարոզման հարցում կանանց կարևոր դերի և նրանց մեծ ներդրման ճանաչում.
- Զինված հակամարտությունների՝ կանանց վրա ունեցած հետևանքների հետազոտությունների անցկացում.
- Փախստական կամ երկրի ներսում տարհանված կանանց պաշտպանություն, օգնության և մասնագիտական վերապատրաստման աջակցության տրամադրում:

Պեկինի գործողությունների ծրագրում ընդգծվում է, որ զինված հակամարտությունների ընթացքում տեղի ունեցած բռնաբարությունները հանցագործություն են և որոշակի հանգամանքներում ցեղասպանության ակտ: Այս մոտեցումներն իրենց արտացոլումը գտան ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած Կանանց, խաղաղության և անվտանգության մասին թիվ 1325 (2000) բանաձևում և հաջորդող վեց բանաձևերում, որոնք հիմք են ծառայում հակամարտություններում ոչ միայն կանանց պաշտպանության, այլև խաղաղարար և կանխարգելիչ գործընթացներում նրանց ակտիվ մասնակցության համար:

Գենդերային անհավասարությունը Հայաստանում խորացել է



Համաշխարհային տնտեսական ֆորումի 2014-ի Գենդերային ճեղքվածքի գլոբալ զեկույցի (Global Gender Gap Report 2014) տվյալներով՝ Հայաստանը 142 երկրների թվում զբաղեցրել է 103-րդ հորիզոնականը՝ անցյալ տարվա համեմատությամբ նահանջելով 8 կետով և տարածաշրջանում հայտնվելով ամենավատ դիրքում: Վրաստանը զբաղեցրել է 85-րդ տեղը, Ադրբեջանը՝ 94-րդն է: Նշենք, որ Գենդերային ճեղքվածքի ցուցանիշը հաշվարկվում է չորս առանցքային ոլորտներում՝ տնտեսություն, քաղաքականություն, կրթություն և առողջապահություն: Ցուցանիշը, ըստ էության, արտացոլում է կանանց ու տղամարդկանց հնարավորությունների միջև եղած տարբերությունը նշված ոլորտներից յուրաքանչյուրում:

Պետության ղեկին

Ներկայումս աշխարհում 152 երկրների նախագահներից 9-ը կանայք են (5,9%): 20 տարի առաջ նրանք ընդամենը երեքն էին: Այսօր 193 երկրից վարչապետի պաշտոն է զբաղեցնում 15 կին (7,8%), իսկ 20 տարի առաջ նրանք կրկնակի պակաս էին: Խորհրդարանի նախագահի պաշտոնին է 40 կին (14,8%): Հայաստանում կանայք երբեք չեն զբաղեցրել այս պաշտոններից և ոչ մեկը:

Ողջ աշխարհում յուրաքանչյուր 5 պատգամավորներից մեկը կին է

Միջխորհրդարանական միության վերջին տվյալներով՝ կանանց ներկայացվածությունն աշխարհի խորհրդարաններում միջինը կազմում է 22,5%: 20 տարի առաջ կանայք կազմում էին խորհրդարանականների ընդամենը 11%-ը: ԵԱՀԿ երկրների խորհրդարաններում կանանց ներկայացվածության միջին ցուցանիշը 25,3% է: Կանանց ներկայացվածությունը արաբական աշխարհի երկրների խորհրդարաններում է 17,8% է, իսկ ամենացածր ցուցանիշը խաղաղօվկիանոսյան երկրներում է՝ 13,4 %: Հայաստանի Ազգային ժողովում կանանց ներկայացվածությունն ընդամենը 10,7% է:

àñáßáõÙÝ»ñÇ ÁÝ¹áõÝáõÙ

Պեկին+20

Երբ կանայք դուրս են մղվում որոշումների կայացման ոլորտից, ժողովրդավարությունը դադարում է գործելուց: Կանանց մասնակցությունը որոշումների ընդունմանը միայն սոցիալական արդարության և ժողովրդավարության պահանջ չէ, այն արդյունավետ կառավարման պարտադիր պայման է: Ղեկավար պաշտոններում կանանց թերի ներկայացվածությունը հնարավորություն չի տալիս նրանց ազդելու պետական քաղաքականության և զարգացման գործընթացների վրա:

Ինչ է առաջարկվում՝

- Միջոցների ձեռնարկում կանանց մասնակցությունը որոշումների կայացման մակարդակում և իշխանական կառույցներում, այդ թվում՝ դատական համակարգում, միջազգային կազմակերպություններում, կուսակցություններում և մասնագիտական միություններում ապահովելու ուղղությամբ.
- Պետական և մասնավոր ոլորտում ղեկավար պաշտոններում կանանց ներկայացվածության մշտադիտարկում և առաջընթացի գնահատում: Կանանց և տղամարդկանց համար բոլոր պետական պաշտոնների հավասար հասանելիության ապահովում.
- Որոշումների ընդունման մակարդակում կանանց մասնակցության հնարավորությունների ընդլայնում:

Կանայք Հայաստանի իշխանությունում



Ինֆոգրաֆիկան՝ WomenNet.am-ի

1096 նախարարի պորտֆելներ

Աշխարհի 189 երկրների կառավարություններում ընդամենը 1096 կին է զբաղեցնում նախարարի պաշտոն: Կանանց ղեկավարած 30 ոլորտների շարքում ամենատարածվածը սոցիալական ապահովության նախարարի պաշտոնն է, որը զբաղեցնում է 105 կին: Առաջին տասնյակում են ընտանիքի հարցերի, էկոլոգիայի և բնական ռեսուրսների, կանանց և գենդերային հարցերի, կրթության, առևտրի, աշխատանքի, մշակույթի, առողջապահության և արտաքին գործերի նախարարական պաշտոնները: Աշխարհում միայն երեք երկրների նախարարների կաբինետում կանայք 50-60%-ից ավելի են, դրանք են Նիկարագուան, Շվեդիան և Ֆինլանդիան: 30 երկրների կառավարությունում նախարարների 30-50%-ը կանայք են: Աշխարհի 8 երկրի կաբինետներում կին չկա: Հայաստանի կառավարությունում 18 նախարարից երկուսն են կին:

Ինը կին եվրահանձնակատարները

Նորընտիր Եվրախորհրդարանի պատգամավորների 37 տոկոսը կանայք են: Նոյեմբերի 1-ից աշխատանքի է անցել նաև նոր եվրահանձնաժողովը՝ նախագահ Ժան-Կլոդ Յունկերի գլխավորությամբ: Նրա կազմում 28 հանձնակատար են, ի թիվս որոնց՝ 9 կին, այսինքն՝ մոտ մեկ երրորդը: Նույնքան կին կար եվրահանձնաժողովի նախկին կազմում՝ նախագահ Ժոզե Մանուել Բարոզուի օրոք, թեև Յունկերը խոստացել էր, որ եվրահանձնաժողովում կանանց թիվը կհասցնի 40%-ի: Նոր կազմում երեք կին զբաղեցնում է փոխնախագահի, մյուս վեցը պատասխանատու են ծանրակշիռ պորտֆելների համար:

ö áñÓ³ ·» ï Ç Ï³ñÍÇù

Աղջիկների մուտքը ռազմական հաստատություններ բանակի բարեփոխումների մի մասն է

Հայկական բանակում սպասվում է փոփոխությունների մի հսկայական շարք: Մի քանի տարի անց զինված ուժերի սպաների կազմում պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի բնորոշմամբ կտեսնենք նաև «նուրբ սեռի ներկայացուցիչների»:

Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում և ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտում պատրաստ են դիմավորելու այն աղջիկներին, ովքեր ցանկանում են ռազմական կրթություն ստանալ և ծառայել հայոց բանակում: Գերատեսչությունում առայժմ վստահ են մեկ հարցում՝ աղջիկները կնպաստեն կարգապահությանն ու զգոնությանը:

Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի գնահատմամբ՝ բանակում սկսված բարեփոխումների արդյունքում շեշտադրումը դրվել է որակյալ կրթության վրա. կրթությունն ու դաստիարակությունը կարևորագույն դերակատարություն ունեն բանակում ծառայության մակարդակը բարձրացնելու և միջանձնային հարաբերությունների բացասական դրսևորումներից խուսափելու համար: Բարեփոխումների ցանկում է նաև սպա աղջիկների մասնակցությունը բանակաշինության գործին: Նախարարը փաստում է, որ աղջիկ սպաների ծառայությունը նոր չէ հայկական բանակում: Վարչական ապարատում բազմաթիվ են կին զինվորականները: Օհանյանը չի մոռանում նաև պատերազմի ժամանակ կանանց մասնակցությունն ու հերոսական գործունեությունը հիշատակել: Նրանցից շատերն այսօր էլ հայոց բանակում են և իրենց կերպարով օրինակ են ծառայում երիտասարդների համար:

Ռազմական փորձագետ Հրաչյա Պետրոսյանցի գնահատմամբ՝ ռազմական բուհերում իգական սեռի աղջիկների ընդունելության հարցը մտածելու տեղիք է տալիս, քանի որ նման նախադեպ չենք ունեցել: Նրա խոսքով՝ թեպետ նշվել է, որ ռուհերում աղջիկներն ազատ ելք են ունենալու և գիշերելու են տանը, սակայն կան հարցեր, որոնք բաց են մնում: «Մի կողմից՝ աղջիկ կուրսանտների ներկայությունն անշուշտ ունենալու է սթափեցնող, զգոնությունը բարձրացնող էֆեկտ ինչպես կուրսանտական, այնպես էլ հրամանատարական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար: Սակայն, մյուս կողմից, նույն այդ անձնակազմը չունի իգական սեռի հետ աշխատելու փորձ, ինչն ամենայն հավանականությամբ առաջին փուլում բարդություններ կառաջացնի»,- ասում է ռազմական փորձագետը:

Նրա խոսքով՝ ինքներս մեզ փորձում ենք համոզել, որ իբր Հայաստանում կինը և բանակը անհամատեղելի են, մինչդեռ դա այդպես չէ: «Զուտ մտածողության խնդիր է, որ մենք չենք փորձում պատկերացնել այդ իրողությունը: Այստեղ տեղին է հիշել, որ ժամանակին նման կերպ էր հասարակությունն ընդունում հայտարարությունը, երբ ոստիկանության ակադեմիան աղջիկների ընդունելություն էր կազմակերպում: Բայց այսօր արդեն դա շատ սովորական երևույթ է ու ոչ մեկի ո՛չ զարմանքն է հարցում, ո՛չ էլ տարօրինակ համարվում»,- ասում է փորձագետը:

Գրող, լրագրող Արա Ալոյանը, ով 5-ամյա չքնաղ աղջնակի հայր է, համոզված է, որ կնոջ մուտքը բանակային համակարգ, հոգեբանական առումով, կարող է յուրատեսակ հավասարակշռություն և ներդաշնակություն ներմուծել: Թեև այդ ամենը կարիք ունի հանգամանալից նախապատրաստության: Նրա կարծիքով՝ աղջիկների ուղղորդումը պետք է սկսել դպրոցական միջին տարիքից, իսկ ավելի ուշ՝ ռազմագիտության կամ նախնական զինպատրաստության դասընթացներով: «Հայաստանյան իրականության մեջ աղջիկների՝ բանակային զորակոչման, ծառայության անցնելու գաղափարը ժամանակ առ ժամանակ շրջանառվում է և ամեն անգամ «փոշիացվում» ազգային մտածելակերպի, նահապետականության, ավանդականության հետ անհամատեղելիության մասին պնդումներով: Առկա է նաև այն հակափաստարկը, թե բանակային կյանքն այնպիսին չէ, որ գրավիչ լինի ոչ միայն իգական սեռի ներկայացուցիչների, այլ նաև տղաների համար»,- ասում է նա:

> *Այսօր Հայաստանում ռազմական ոլորտում բարձրագույն կրթություն ստացող ուսանողների թվում աղջիկները 0,3 տոկոս են կազմում:*

Փորձագետ Տիգրան Աբրահամյանի կարծիքով այն, որ ներկայումս Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը որոշ մասնագիտությունների գծով ընդունելություն է կազմակերպել, նշանակում է, որ կանայք կարող են առավել օգտակար լինել բանակին, և զինված ուժերում կանանց թիվը առաջիկայում կաճի, ընդ որում՝ կադրային սպայի կարգավիճակով:

Î³Ý³Ûù é³½ÙÇ¹³ß ï áõÙ

Ինչո՞ւ էին կանայք գնում պատերազմ

Հայրենասիրական մղումով

«Մեր ջահելները որ գնում են կռվի, մենք կարո՞ղ ա նստենք: Էն ժամանակ մենք չենք ասել, թե գնում ենք ինչ-որ հերոսության»:

«Մենք մեր հողը պահելու համար գնացինք կռվի, որ մեր բալիկները, ծնողները ապահով ապրեն»:

Իրավիճակի թելադրանքով

«Մտածել եմ, որ կգնամ էրեխունց [տղաների] համար հաց կսարքեմ, կօգնեմ: Որ տեսա սաղ ընկերներս զենք են վերցնում, ասեցի՝ պրոբլեմ չկա, ես էլ կվերցնեմ, կկռվեմ»:

«Թուրքերը մտել էին մեր գյուղ, ով ոնց կարում, պաշտպանվում էր: Ուզած-չուզած կռվելու էինք»:

Հարազատների պատճառով

«Բա տղաս 17 տարեկան էր ու գնաց կռվին մասնակցելու, ես ո՞ւր պետք ա գնայի, եթե ոչ ռազմի դաշտ»:

«Անկեղծ ասած՝ չգիտեմ դա ինչից էր, մինչև այսօր էլ էդ ուժը կա իմ մեջ, ես միայն մի բան էի մտածում՝ Աստված չանի մարդուս հետ մի բան պատահի, ինչ-որ բան անեին, ես ձեռքերով կխեղդեի: Այ էդ էր, և դա երևի ձգեց տարավ իրա հետևից: Ես հերոս չէի... չէ՛, հիմա որ հետ եմ նայում, վախենալու էր, ուղղակի ես պիտի կողքը լինեի, դրա համար գնացի նրա հետևից»:

ԵՊՀ գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի «Կանայք ռազմական ոլորտում» հետազոտության նյութերից

Արցախյան պատերազմում մարտնչել է շուրջ 600 կին: Հայ կնոջ անձնվեր հայրենասիրության և մարտի դաշտում խիզախության խորհրդանշանն է Սոսե Մայրիկի կերպարը: Մեծ է եղել կանանց դերը նաև խորհրդային բանակում, որտեղ մարտնչել է շուրջ 1 մլն կին, այդ թվում՝ 10 հազար հայուհի:

Ներկայումս ՀՀ ԶՈՒ-ում ծառայում են շուրջ 2000 կանայք. նրանց շրջանում կան վարչական աշխատակիցներ, դիպուկահարներ, տարբեր ստորաբաժանումների պետեր:

´³Ý³ÏÇ ÏáãÁ

«Կոտրի՛ր կարծրատիպերը, անցի՛ր մեր շարքերը»

Վերջերս ՀՀ զինված ուժերի կողմից ներկայացվեց սոցիալական տեսահոլովակ, որով փորձ է արվում հաղթահարել այն կարծրատիպերը, ըստ որոնց՝ կինը չի կարող ծառայել բանակում:

«Կինը չի սիրում շտապել», «կինը վախենում է բարձրությունից, «կինը թույլ և անօգնական է», «կինը որոշումներ չի կայացնում»: Հենց այս կարծրատիպերն է առաջարկվում վերանայել և ցանկության դեպքում հայոց բանակում ծառայության անցնել:

²Ýí ï ³Ý·áõÃÛ³Ý ÛáÃ µ³Ý³Ó»õ

Կանայք կարող են աշխարհն ավելի խաղաղ դարձնել

2000 թվականից սկսած ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունել է յոթ բանաձև, որոնք ընդգրկում են խաղաղության և անվտանգության հարցերում կանանց մասնակցության տարբեր կողմեր:



Առաջինը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2000-ին ընդունված **թիվ 1325 բանաձևն** էր, որն ուղղված է կանանց վրա զինված հակամարտությունների հետևանքների բացասական ներգործությունը մեղմելուն և կանանց դերի բարձրացմանը հակամարտությունների կանխարգելման և կարգավորման, խաղաղության պահպանման գործում:

2008-ին ընդունված **թիվ 1820 բանաձևը** հստակեցրեց, որ հակամարտության պայմաններում սեռական բռնությունը համարվում է ռազմական հանցագործություն:

Հաջորդ՝ **թիվ 1888 (2009) բանաձևում** ՄԱԿ-ի ԱԽ-ն հանձնարարում է խաղաղապահ առաքելություններին զինված հակամարտության պայմաններում ապահովել կանանց և երեխաների պաշտպանությունը սեռական բռնությունից:

Մյուս՝ **թիվ 1889 (2009) բանաձևը** պարունակում էր քաղաքական գործընթացներում կանանց մասնակցության հետագա ընդլայնման կոչ, ինչը թիվ 1325 բանաձևի իրականացման անհրաժեշտ պայմանն է: Խոսքը, ըստ էության, իշխանության համար պայքարի կանոնների փոփոխության մասին է:

2010-ին ընդունվեց **թիվ 1960 բանաձևը**, որը կանանց հիմնախնդիրների, խաղաղության և անվտանգության համատեքստում զարգացնում և խորացնում է սեռական բռնության դեմ պայքարի թեման:

Անցյալ տարի ընդունվեց ևս երկու բանաձև: Մեկը հակամարտությունների ընթացքում սեռական բռնության համար անպատժելիության դեմ պայքարին ուղղված **թիվ 2106 բանաձևն** է, որում շեշտադրվում է կանանց քաղաքական, սոցիալական և տնտեսական իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման անհրաժեշտությունը: Մյուսը՝ **թիվ 2122 բանաձևը**, որում ընդգծվում է հիմնական թիվ 1325 բանաձևի կատարման համար պատասխանատվությունը, ինչպես նաև խաղաղության, անվտանգության և զարգացման ապահովման ջանքերում կանանց մասնակցության կարևորությունը:

***

Հոկտեմբերի 28-ից Նյու Յորքում անցկացված 1325 բանաձևի շաբաթվա շրջանակներում առանցքային տեղը հատկացված էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստում բաց բանավեճին՝ նվիրված «Կանայք և խաղաղությունն ու անվտանգությունը» թիվ 1325 բանաձևի իրականացմանը: Նիստի մասնակիցներին հղված ուղերձում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը հորդորեց միջազգային հանրությանը դիտարկել կանանց ոչ միայն որպես հակամարտությունների զոհերի, այլև որպես խաղաղության և առաջընթացի ապահովման գործընթացների ակտիվ մասնակիցների: ՄԱԿ-Կանայք կառույցի ղեկավար Ֆումզիլե Մլամբո-Նգկուկան հայտարարեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի մտադրության մասին՝ պատրաստել 1325 բանաձևի իրականացման հարցով գլոբալ հետազոտություն: Այն նվիրվելու է 2000-ի հոկտեմբերի 31-ին ընդունված բանաձևի 15-ամյակին:

Ժամանակն է գործելու

Ցանկացած զինված հակամարտության և պատերազմական գործողությունների ընթացքում տեղի են ունենում սեռական հանցագործություններ. բազմաթիվ կանայք, դեռատի տղաներ ու աղջիկներ բռնաբարության են ենթարկվում: Հայերը նման ողբերգություն ապրել են հատկապես 20-րդ դարի սկզբին, երբ հազարավոր հայ աղջիկներ սեռական ստրկացման ու բռնաբարության զոհ դարձան:

Սեռական բռնությունը այսօր էլ բոլոր զինված հակամարտությունների անբաժանելի մասն է կազմում, այն ցեղասպանություն կատարելու գործիք է հանդիսանում: Կանանց ու աղջիկների բռնաբարություններ արձանագրվեցին նաև սումգայիթյան ջարդերի ժամանակ և այլ հակամարտություններում: Ռուանդայում 1994-ին տեղի ունեցած կոտորածի ժամանակ 100 օրվա ընթացքում սպանվեց 800 հազար մարդ՝ բնակչության 20 տոկոսը, իսկ բռնաբարված կանանց թիվը, ՄԱԿ-ի տվյալներով՝ 250 հազարի հասավ: Սիեռա Լեոնեում քաղաքացիական պատերազմի (1991-2002) ժամանակ բռնաբարվել է 60 հազար կին, Լիբերիայում (1989-2003)՝ 40 հազար, նախկին Հարավսլավիայում (1992-1995)՝ 60 հազար, Կոնգոյում՝ 1998-ից սկսած բռնաբարված կանանց թիվը 200 հազարից ավելի է:

Այս տարի հունիսին Լոնդոնում տեղի ունեցավ հակամարտություններում սեռական բռնությունը դադարեցնելու խնդրին նվիրված գլոբալ գագաթնաժողովը, որը նախագահում են Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախկին նախարար Վիլյամ Հագը և դերասանուհի Անջելինա Ջոլին, ով ՄԱԿ-ի հատուկ պատվիրակ է փախստականների հարցերով: Նշենք, որ 2012-ին էկրան բարձրացավ Բալկաններում քաղաքացիական պատերազմի ժամանակ կատարված բռնաբարությունների մասին Անջելինա Ջոլիի «Արյան և մեղրի երկրում» ֆիլմը, որը դերասանուհու առաջին ռեժիսորական դեբյուտն էր և պատմում էր Բոսնիայում կատարված հազարավոր բռնաբարությունների մասին:

Արտգործնախարար Հագն իր ելույթում հենց այդ փաստը հիշատակեց, նշելով, որ երկու տասնամյակ առաջ գրեթե 50 հազար բոսնիացի կանայք են սեռական բռնության ենթարկվել, սակայն նրանցից ոչ ոք չի կարողացել հասնել նրան, որ բռնարարը պատասխանատվության ենթարկվի: «Սեռական բռնության մասին խոսելը դեռևս տաբու է, մենք պետք է պայքարենք նաև այս տաբուի դեմ»,- հայտարարել է գագաթնաժողովը նախագահողը:

Գագաթնաժողովին մասնակցելու համար Մեծ Բրիտանիայի մայրաքաղաք էին ժամանել մոտ 100 երկրների 900 փորձագետներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, հակամարտության ընթացքում սեռական բռնության ենթարկված անձինք և կրոնական միությունների առաջնորդներ: Նրանք որոշեցին միավորել իրենց ջանքերը հաստատելու այն կոնկրետ ծրագիրն ու գործողությունները, որոնք վերջ կդնեն բռնաբարության՝ որպես պատերազմական զենքի կիրառմանը:

°ñ»Ï áõ ³Ûëûñ

«Երիտթուրքական իշխանությունները պատերազմը սկսելուց անմիջապես հետո սիստեմատիկ կերպով իրականացրել են երկրի ոչ մուսուլման ազգերի ոչնչացումը: Երիտասարդ կանանց, աղջիկներին և երեխաներին գողանում էին: Այդ կանանցից շատերն առաջին իսկ հնարավորության դեպքում ինքնասպան էին լինում: Շատ ծնողներ իրենց երիտասարդ աղջիկներին նետել են Եփրատի ջրերի մեջ: Նորածին երեխաներին գրկած բազմաթիվ երիտասարդ կանայք նույնպես ցատկել են անդունդը: «Շատերը խենթացան: Նրանցից ոմանք բռնաբարությունից հետո կարողացել են փախչել, սակայն մեծ մասը զոհվել է փախուստի պահին»:

Ըստ Փարիզի Նուբարյան գրադարանում վերջերս հայտնաբերված հայտնի գրող Զապել Եսայանի զեկույցի

«Բռնաբարություններ են տեղի ունենում ամեն օր և ամենուր: Քուրդ և եզդի աղջիկները, չդիմանալով հոգեկան ապրումներին, զանգվածաբար ինքնասպանություն են գործում: Հայտնի է դարձել մի պատմություն, երբ ահաբեկիչները 3 աղջկա են գերեվարել և ենթարկել բռնությունների: Վերադառնալով Սինջար լեռան վրա գտնվող ճամբար, որտեղ պատսպարվում են եզդի փախստականները, նրանք չեն կարողացել տանել անպատվությունը: Ինչպես պատմել է տուժածներից մեկի մայրը, աղջիկները հավատակիցներից խնդրել են սպանել իրենց, սակայն որևէ մեկը ցանկություն չի հայտնել, և աղջիկները կյանքին ինքնակամ հրաժեշտ են տվել՝ նետվելով ժայռից»:

Ըստ քրդական Rudaw գործակալության

Հայոց ցեղասպանություն, 1915

Եզդիների ցեղասպանություն, 2014

ä³ßï å³ÝáõÃÛáõÝ

ԵԱՀԿ-ն առաջընթաց է արձանագրել

ԵԱՀԿ-ն 2004-ին ընդունված Գենդերային հավասարության խթանման գործողությունների ծրագրից ի վեր զգալի հաջողությունների է հասել իր իսկ կառույցների ղեկավար պաշտոններում կանանց ներկայացվածության առումով: Այսպես, 2004-ից առ այսօր կանանց թիվը ԵԱՀԿ կառույցների ղեկավար պաշտոններում աճել է 14 տոկոսից մինչև 34 տոկոս: Իսկ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի ղեկավար կազմում այս տարի կեսից ավելին կանայք են ընտրվել: Կանայք վեհաժողովի երեք ընդհանուր կոմիտեներում ինը ղեկավար դիրքերից զբաղեցնում են յոթը, ներառյալ նախագահի բոլոր երեք պաշտոնները:

Կանայք պաշտպանության նախարարի պաշտոնին

Տարվա սկզբին այս լուսանկարը ցնցեց ինտերնետը: Լուսանկարում եվրոպական հինգ երկրների՝ Ալբանիայի, Նիդեռլանդների, Գերմանիայի, Նորվեգիայի և Իտալիայի պաշտպանության նախարարներն են ՆԱՏՕ-ի համաժողովներից մեկում: Առանձնակի հիացմունք և զարմանք էր հարուցել այն, որ նրանք բոլորը կին են: Սակայն քչերին էր հայտնի, որ նրանց թվում բազմազավակ մայրեր կան: Օրինակ, Գերմանիայի պաշտպանության նախարար Ուրսուլա ֆոն դեր Լայենը յոթ երեխայի մայր է: Նրանք համեմատաբար վերջերս են նշանակվել և, դատելով մամուլի հրապարակումներից, տղամարդկանցից պակաս չեն քննադատության ենթարկվում և ոչ միշտ են համապատասխանում «աղավնու» կերպարին: Ի դեպ, աշխարհում միայն 15 կին է զբաղեցնում պաշտպանության նախարարի պաշտոնը:

Կանայք ՄԱԿ-ի «երկնագույն սաղավարտների» շարքերում

2014-ի հոկտեմբերին ՄԱԿ-ի խաղաղապահ կորպուսում հաշվում էր ավելի քան 104 հազ. «երկնագույն սաղավարտներ», այդ թվում՝ 92 հազ. զինծառայող, 12 հազ. ոստիկան և շուրջ 1700 ռազմական դիտորդներ: Կանայք կազմում են զինծառայողների 3 տոկոսը, ոստիկանների 10 տոկոսը և ռազմական դիտորդների 4 տոկոսը: ՄԱԿ-ի ոստիկանության բաժինն իրականացնում է հատուկ ռազմավարություն այն ուղղությամբ, որ կին ոստիկանների մասնաբաժինը կազմի 20%:

Վերջերս ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը նորվեգուհի գեներալ-մայոր Քրիստին Լունդին նշանակեց Կիպրոսում խաղաղության պահպանման ՄԱԿ-ի զինված ուժերի հրամանատար: Լունդն այս պաշտոնում առաջին կինն է:

«Առանց կանանց անվտանգության ոչ մի անվտանգություն չես կառուցի»

Հակամարտությունների կարգավորման մեջ կանանց մասնակցությունը հույժ կարևոր է կայուն խաղաղության հասնելու համար:

- 1992-2009 թթ. ժամանակահատվածում սկսված միայն 5,9% խաղաղության բանակցություններին են կանայք մասնակցել:
- Հաշտության պայմանագրերի միայն 2,4%-ն է ստորագրվել կանանց ձեռքով:
- 1992-2009 թթ. ժամանակահատվածում ստորագրված 585 հաշտության պայմանագրերից միայն 16%-ում են հիշատակվում կանայք:

Ð³ñó³ 1ñáõÙ

«Վերջապես ժամանակն է, որ հարց տանք մեզ՝ ի՞նչն է ավելի շատ նպաստում անվտանգությանը՝ 900 միլիարդ դոլարը, որ աշխարհը ներդնում է սպառազինությունների մեջ, թե՞ այն 3 միլիարդը, որ անհրաժեշտ է ներդնել կանանց առաջընթացն ապահովելու համար:

Նաֆիզ Սադիկ,
ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ հանձնակատար,
2005թ. Պեկին+10»

Ê³Õ³Õ³ñ³ñáõÃÛáõÝ

Արցախ. պատերազմը կանանց աչքերով

Արցախյան պատերազմից արդեն երկու տասնամյակ է անցել, սակայն այսօր էլ դեռ պատերազմի հետևանքները տեսանելի են ու շատ մարդկանց համար առօրյա պայքարի են վերածվել՝ կենցաղային դժվարություններ, առողջական խնդիրներ, կորուստ ապրած ընտանիքներ:

Սեպտեմբերին «Կանանց ռեսուսային կենտրոն» ՀԿ և նրա Շուշիի մասնաճյուղի նախաձեռնությամբ կայացած «Հայ կանայք հակամարտության և խաղաղասիրության խաչմերուկում» կոնֆերանս-քննարկումը Լեռնային Ղարաբաղ էր բերել հասարակական կազմակերպությունների, ակտիվիստների ու պետական կառույցների ներկայացուցիչների, ինչպես նաև այն կանանց, ովքեր անձամբ են ապրել պատերազմը՝ հաղթահարելով բոլոր դժվարությունները: Մենք զրուցեցինք հավաքի մասնակիցների հետ.

- Առաջին անգամն է, որ այս թեմայով հենց Շուշիում ենք անցկացնում նման միջոցառում: Սա շատ կարևոր է, քանի որ Շուշին խորհրդանշական նշանակություն ունի Արցախյան պատերազմը վերապրած յուրաքանչյուր հայի համար: Այստեղ առանձնակի սրությամբ են զգում հակամարտության հետևանքները: Ներկա էին կանայք, ովքեր մասնակիցն են եղել, ականատեսը այս պատերազմի,- նշում է «Կանանց ռեսուրսային կենտրոն Հայաստան» ՀԿ նախագահ Լարա Ահարոնյանը, նկատելով, որ շատ կարևոր է, որ այս հարցերում լսելի դառնա կանանց ձայնը:

Մեր զրուցակից տիկին Անահիտը Շուշիից բանաստեղծուհի է, երկու գրքերի հեղինակ, սակայն ինչպես խոստովանում է, միայն վերջին տարիներին է, որ կարողանում է իր սիրելի գործով զբաղվել՝ ստեղծագործել: Պատմում է, որ Շուշիի ազատագրումից մի քանի օր հետո իր երեք երեխաների հետ տեղափոխվում է Շուշի:

- Դժվար էր, որովհետև մայիսի վերջն էր, ու մարդկանց մեջ անհանգստություն կար, չգիտեինք՝ վե՞րջն է, թե՞ կարող է նորից վերադառնա թշնամին, տեղ-տեղ տներ էին վառվում: Ջուր չկար, լույս չկար, հոգիդ ճնշվում էր: Վարչականից մինչև տուն գնում էիր ճամփին մարդ չէիր հանդիպում: Տոպրակներով հաց էինք բերում Ստեփանակերտից, գիշերը երեք երեխաներիս հետ գնում էինք, հացի հերթ կանգնում, որ երկուական հաց ստանանք, որ գոնե հաջորդ օրը չգնանք:

Տիկին Անահիտի հայրական գյուղը Նախիջևանիկն է՝ Ասկերանի շրջանում: Թուրքերը այդ գյուղն էլ չեն շրջանցել, շատ զոհեր է տվել:

- Եղբայրս գյուղի հրամանատարն էր: Էն ժամանակ մեր ընտանիքից վեց հոգի կռվում էին՝ եղբայրս, քեռուս երեք տղաները, հորեղբորս երկու տղան: Որ գալիս էին գիշերը շորերը փոխելու, արագ լվանում էինք, թոնրի մեջ չորացնում, որ առավոտը տանք, որ կախում էինք էդ պարանից, տան մի ծայրից մյուսն էր հասնում:

Նունե Դավիդյանը Շուշիի ռեսուրսային կենտրոնի երիտասարդ ակտիվիստներից է:

- Շատ բան չեմ հիշում պատերազմից: Այն ժամանակ 5 տարեկան էի: Այդ օրը տանն էինք, ցորենի պարկեր էին շարված, երբ գրադը խփեց, ամեն ինչ իրար անցավ: Սա եմ միայն լավ հիշում: Պատերազմի տարիների հորս եմ նաև կորցրել, նրան գրեթե չեմ հիշում, միայն լուսանկարներով ու նրա մասին պատմություններով: Մայրս էլ շատ ու շատ արցախցի կանանց նման ամբողջ հոգսը իր վրա վերցրեց, նորից չամուսնացավ: Էն ժամանակ երևի կխանդեի, հիմա ուրիշ կերպ եմ նայում: Մայրս ինձ համար կենդանի լեգենդ է:

Տիկին Ազիքան Իրանից է. իրանա-իրաքյան հակամարտության տարիներին ութ տարի բուժքույր է աշխատել:

- Կարծում եմ՝ կինը պատերազմական շրջանում ավելի է ուժեղանում. հիվանդանոցում մոտ 80 տոկոսը կանայք էին՝ բժիշկ, բուժքույր, սանիտար: Բոլորս ձեռք ձեռքի տված աշխատում էինք, ու չէր տարբերվում՝ կի՞ն ես, թե՞ տղամարդ: Ինչ ձեռքիցդ գալիս էր, անում էիր: Էն վիճակի վիրավոր մարդկանց էին բերում, որ էստեղ սեռը արդեն կապ չուներ, դու մտածում էիր մենակ էդ մարդուն փրկելու մասին:

Պատերազմական տարիներին, որպես բուժքույր ռազմի դաշտում է եղել Շուշիի մոր և մանկան առողջության պահպանման կենտրոնի գլխավոր մանկաբարձ-գինեկոլոգ Մանուշ Սարգսյանը:

- Պատերազմի դաշտում էլ եմ աշխատել, այդ տարիներին նաև ծնունդ ընդունել: Չկար գազ, էլեկտրականություն, ջուր, էլեմենտար հագուստ չկար, բայց կանայք այդ պայմաններում ծննդաբերում էին: Այո՛, հակասանիտարական վիճակ էր, ձեռքերը լվանում էինք ոչ հոսող ջրի տակ՝ շշից լցված ջրով, գործիքների ախտահանումը կատարվում էր փայտե վառարանների վրա, բայց երևի այդ ժամանակ Աստված մեր կողմից էր, քանի որ ինֆեկցիաների բռնկումներ չեղան:

Տիկին Մանուշը խոսում է նաև հետպատերազմյան այն դժվարությունների մասին, որոնց առջև կանգնում են կանայք.

- Վերջին տարիներին շատացել են ներարգանդային պտղի զարգացման արատները, անպտղության դեպքերը, սա ուղղակի կապ ունի պատերազմի հետևանքների հետ, այսօրվա ծննդաբերողները այն սերունդն է, որը խոնավ նկուղներում, թերսնուցման պայմաններում է մեծացել: Ունենք նաև զոհված ազատամարտիկների կանանց խնդիր, ովքեր ամաչում են անգամ դիմել բժշկի, հատկապես՝ գինեկոլոգի, քանի որ շրջապատում կասեն՝ այրի է, զոհվածի կին է, դիմեց գինեկոլոգի: Մինչդեռ սա այն դեպքում է, երբ հենց նույն կանայք առողջական լուրջ խնդիրներ ունեն, կրծքագեղձի պաթոլոգիա և այլն, որից կարելի է խուսափել ժամանակին բժշկի դիմելու դեպքում:

Փախստականների խնդիրների մասին էլ բարձրաձայնեց Ռուզաննա Ավագյանը, ով ԼՂՀ-ում փախստականների հարցերով կազմակերպության ներկայացուցիչ է:

- Մեր կանայք երկու պատերազմ են անցել, առաջինը՝ Սումգայիթում, Բաքվի ողբերգություններն էին, իսկ երկրորդ պատերազմը արդեն այստեղ՝ 1991 թվականին, իսկ այդ ամենը խորը հետք է թողել մեր կանանց վրա: Մոտ հազար ընտանիք ունենք ԼՂՀ-ում, որոնք դեռ չունեն սեփական տուն, սանիտարահիգիենիկ տարրական պայմաններ, երեխաներ են այդ պայմաններում ծնվում ու մեծանում, - նշում է տիկին Ռուզաննան:

- Ճիշտ է, պատերազմն արդեն սառեցված է, սակայն հետևանքները մինչ այսօր էլ զգալի են ու տեսանելի,- նշում է ԼՂՀ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցիչ Ինգա Ավանեսյանը՝ առանձնացնելով և անհայտ կորածների ընտանիքների խնդիրը: - Չկա կենդանության մասին լուր, բայց և չկա նաև լուր, որ մարդը մահացած է: Այս կանանց ոչինչ չի մնում, քան հուսալ ու չհուսալքվել, ու այսպես ամեն օր՝ չկորցնելով հույսը: Բազմաթիվ խնդիրների առջև է կանգնում այն կինը, ում ամուսինը անհայտ կորած է համարվում. ի՞նչ անել, օրինակ, ամուսնանա՞լ, նորից ընտանի՞ք ստեղծել, թե՞ չէ: Այս իրավիճակը ստիպում է շատ կանանց պարզապես պարփակվել, ու շատերը նույնիսկ տնից դուրս չեն գալիս, ոչ մեկի հետ չեն շփվում:

êՇÙ³Ý³å³ÑÝ»ñÁ

Չինարի գյուղը գտնվում է Տավուշի մարզում՝ հայ-ադրբեջանական սահմանին: Այն պարբերաբար է ենթարկվում ռմբակոծության ադրբեջանական դիրքերից: Չինարիում կրակահերթի տակ է նաև մանկապարտեզը: Շենքում նկատելի են գնդակների հետքերը: Փոքրիկները խոստովանում են, որ կրակոցներից չեն վախենում: Դիմացի սարին ինչպես թշնամու դիտակետն է, այնպես էլ հայկական եկեղեցին: Մանուկները համոզված են, որ եկեղեցին իրենց կպաշտպանի թշնամուց: Փոքրիկ Մասիսն ասում է, որ երբ ուժեղ են կրակում, իրենք մտնում են թաքստոցը: «Չենք վախենում, ուղղակի ընկեր Աղասյանն ասում է, որ արագ գնանք «մութ սենյակը»,- պատմում է Մասիսն ու ցույց տալիս թաքստոցը: Երբ կրակոցներ չեն հնչում՝ փոքրիկները սիրում են խաղալ, իսկ ամենից շատ սիրում են շարք կանգնել ու կատարել իրենց սիրած երգը՝ «Արծի՛վ, սլացի՛ր»:

ä»ÏÇÝ+20. µáÉáñÁ å³ï³ëË³Ý³ïáõ»Ý

Յուրաքանչյուր կին, Յուրաքանչյուր իրավունք, Յուրաքանչյուր rողե

«Բոլորը պատասխանատու են, և ժամանակը եկել է»՝ այս խորագրի ներքո նոյեմբերի 3-5-ը Ժնևում կայացած ոչ կառավարական կազմակերպությունների ֆորումը ընդունեց հռչակագիր, որով ամփոփեց Պեկինի գործողությունների ծրագրի իրականացման արդյունքները ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE) տարածաշրջանի 56 երկրներում, այդ թվում՝ Հայաստանում: Ֆորումն ընդունեց նաև հանձնարարականներ 10 հիմնական խնդրահարույց ուղղություններով: Դրանք ներկայացվեցին Պեկին+20-ի քննարկմանը նվիրված նոյեմբերի 6-7-ը Ժնևում անցկացված կառավարական մակարդակով հավաքին:

Պեկինի գագաթնաժողովից ի վեր բոլոր հետպեկինյան գործընթացներում ակտիվ ներգրավված են ոչ կառավարական կազմակերպությունները, և նրանց տեսակետը պարտադիր հաշվի է առնվում կառավարական մակարդակով անցկացվող քննարկումների ժամանակ: Ժնևի հավաքը այս առումով բացառություն չէր, քննարկումները ընթանում էին գրեթե զուգահեռ ռեժիմով: Հասարակական կազմակերպությունների ֆորումին մասնակցում էին 56 երկրներից 700 պատվիրակներ, որոնք ներկայացնում էին 350 ՀԿ-ներ, կոալիցիաներ և ցանցեր: Եվս 500 պատվիրակ մասնակցում էր անդամ պետությունների կառավարական մակարդակով քննարկումներին, որոնք մեկնարկեցին ՀԿ-

ների ֆորումի ավարտից անմիջապես հետո:

Ակնկալվում է, որ արդյունքների նման գնահատում կարվի ՄԱԿ-ի հինգ տարածաշրջանային հանձնաժողովների յուրաքանչյուրի կողմից, ինչից հետո 2015-ի մարտին Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 59-րդ նստաշրջանում կամփոփվեն «Պեկին+20»-ի գլոբալ արդյունքները, և կնախանշվեն հետագա անելիքները:

ºñÇï³ë³ñ¹Ý»ñÇÓ³ÛÝÁ

«Ադրբեջանում էլ կան մարդիկ, որոնք մեր պես ցանկանում են խնդիրը կարգավորել միայն խաղաղ ճանապարհով»

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման մեջ թե՛ ադրբեջանական, թե՛ հայկական կողմից ներգրավված են բացառապես տղամարդիկ: Երկու երկրների կանայք միմյանց հետ հարաբերվում են ավելի ցածր օղակներում՝ հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպվող տարբեր հանդիպումների, կրթական ծրագրերի շրջանակներում: Ադրբեջանցի հասակակիցների հետ անձնական շփում ունեցած հայ երիտասարդ կանայք ներկայացնում են իրենց տեսակետը՝ նման հանդիպումների արդյունավետության և հակամարտության կարգավորման մեջ կանանց ներգրավվածությունն ապահովելու խնդրի վերաբերյալ:

Անի Հովհաննիսյան. «Հայ-ադրբեջանական հանդիպումները կարևոր են զուտ ճանաչողական տեսանկյունից, բայց կոնֆլիկտի լուծումը պետք է իրականացվի քաղաքական մակարդակում: Կանանց պետք է ներգրավվել քաղաքական գործընթացներում, քանի որ խաղաղության մոդելներ առաջարկելը միայն տղամարդ պաշտոնյաների մենաշնորհը չէ: Երբ երկու հասարակություններն էլ այնքան զարգացում կապրեն, որ կանայք ու տղամարդիկ հավասար կմասնակցեն քաղաքական գործընթացներին, միգուցե հենց այդ ժամանակ էլ երկխոսության հնարավորություն կլինի»:

Գայանե Ավագյան. «Պետք է հաշվի առնել, որ կանայք, որպես ընտանեկան խաղաղության ապահովման «պատասխանատուներ» և ուժի դրսևորումից, ցուցադրումից խուսափողներ, ի տարբերություն տղամարդկանց, միշտ կողմ են հարցի խաղաղ կարգավորմանը: Սակայն խնդիրն այն է՝ ինչ ոգով են նրանք սերունդ դաստիարակում, կարող են արդյոք մեծացնել իրենց զավակները՝ առանց հարևանի նկատմամբ ատելություն սերմանելու»:

Լիլիթ Նուրիջանյան. «Մեկ տարի սովորել եմ Վրաստանում, որտեղ ունեի ադրբեջանցի կուրսեցիներ, ում հետ երևի մարդկայնորեն ավելի լավ հարաբերությունների մեջ էի, քան վրացիների, ու նույնիսկ հիմա էլ կապ կա նրանց հետ: Հայերի համար Ադրբեջանը կարող է հրեշներով ու բեղավոր հիմար մարդկանցով երկիր լինել: Ադրբեջանցին ինձ համար նաև իմ կուրսեցի Փերիշն է, ում միայն ուրախությամբ եմ հիշում: Բայց երբ սահմանին իմ զինվորին են կրակում, ադրբեջանցին ինձ համար իմ հարևանի տղային, եղբորս, ընկերոջս, սիրածս մարդու վրա կրակած ադրբեջանցին է, ու այդ պահին իմ կուրսեցի Փերիշը ոչ մի կերպ չի մեղմում իմ զայրույթն ու նրանց դեմ կռվելու ցանկությունը»:

Մարինե Սարգսյան. «Առաջին անգամ ադրբեջանցիների հետ հանդիպել եմ ուսանող տարիներիս. սկսնակ լրագրողների համար նախատեսված սեմինար էր: Միայն առաջին հանդիպման ժամանակ, հիշում եմ, կար մեծ լարվածություն ու հետաքրքրասիրություն տեսնելու, թե ով է այդ թշնամին: Հետո պարզվեց, որ այդ թշնամին ինձ ու հարևանիս նման երիտասարդներ են, ովքեր մեր պես փորձում են փոփոխությունների հասնել իրենց երկրում: Նման հանդիպումների կարևորությունը երևի միայն այն է, որ հանդիպում ես ու տեսնում, որ քո պես երիտասարդ մարդիկ են և այդքանը: Իհարկե, խնդրի շուրջ քննարկումներ լինում են, բայց չեմ հիշում, որ երբևէ դրանք համաձայնության բերեին: Մենք ասում էինք՝ Բաքվի, Սումգայիթի ջարդեր, նրանք՝ Խոջալու. և հետո իրենք՝ մեր հողերը, իսկ մենք՝ դրանք ձեր հողերը չեն... ու վերջ... հետո բաժանվում էինք ու բորբոքված հոգիներով քնում... այդքանը...»:

Մերի Մամյան. «Մեկ անգամ եմ մասնակցել երկկողմ հանդիպման և բավականին հետաքրքիր էր, քանի որ ադրբեջանական պատվիրակության մեջ կային երեք տարբեր մոտեցումներ նույնիսկ մեզ հետ շփվելու առումով: Նման հանդիպումները որոշ կարծրատիպեր են փոխում, հասկանում ես, որ կան Ադրբեջանում էլ մարդիկ, ում հետ կարելի է շփվել, անկախ առկա հանգամանքներից: Ադրբեջանում էլ կան մարդիկ, որոնք մեր պես ցանկանում են խնդիրը կարգավորել և դա անել միայն խաղաղ ճանապարհով: Սակայն այդ հանդիպումները ազդում են հասարակության փոքր շերտերի որոշ հատվածների վրա, իսկ գլոբալ փոփոխությունները կատարվում են այլ մակարդակում»:

Համարի վրա աշխատել են՝

Լիլիթ Քոչինյանը, Լալա Տեր-Ղազարյանը, Հասմիկ Հարությունյանը, Արման Ղարիբյանը, Մարիամ Մարտիկյանը, Լիանա Սարգսյանը

ÂáÕ³ñÏáõÙÁ å³ï³ñ³ëï»É¿ º²ÐÎ º ñ»ñ³ÝÛ³Ý
·ñ³ë»ÝÛ³ÏÇ »ñÎ³Ý³ÝóÑ³Ù³ñ
·É áµ³É ÑÇÙÝ³¹ñ³ÙÇ³ç³ÏóáõÃÛ³Ùµ

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
էլ. հասցե՝ womennetam@gmail.com